Ա. ՏԱՐԻ —.(9/22 ՍԵՊՏ. 1903. — ՌՈՒՍՉՈՒԿ).— ԹԻՎ 13

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հասցէ՝
Rédaction du journal
„VERADZNOUTIOUN"
ROUSTCHOUK (Bulgarie)

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱՄԷՆ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ
Տարեկան՝ 10 Ֆրանք, կէստարեայ՝ 5 Ֆրանք։

Հասցէ՝
Редакция на вѣстникъ
„ВЕРАДЗНУТЮНЪ"
РУСЕ

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Այն սէրը դէպի աղատութիւն և այն արիութիւնը կռուում, որ ցոյց է տալիս մակեդոնացի բուլգար ժողովուրդը, արժանի են միանգամայն սքանչացմանու քաջալերութեան։ Երկար ժամանակ նա ընդունել էր պաշտպանողական դիրք ընդդէմ սուլթանական բռնակալութեան ամէն հալածանքների ու յարձակումների, ամէն վայրագութիւնների ու ըսպանութիւնների։ Եւ մեղ թւում է, որ այդ պաշտպանողական դիրքը պարզ ապատողական չէր։ Փոքրիկ ժողովուրդը, որ այսօր արիութեան մէջ ներկայանում է մեծ, անշուշտ կանխապէս ունէր ձեռքի տակ գործողութիւնների որոշ նախագիծ, որի հիմքն էր ամենից առաջ պատրաստողական աշխատութիւնը մարտական գնդերի համախմբումն ու կազմակերպութիւն, որպէս և հրանիւթային պաշարի մթերումն։ Ակներև է, որ կռիւը սկսելու րոպէն էլ մօտաւորապէս որոշուած էր յեղափոխական վարիչ մասնախմբերի կողմից։ Եւ այժմ, ահա մի քանի ժամանակից ի վեր, պաշտպանողականից ներանք անցել են ուղղակի վճռականապէս յարձակողական շրջանը։

Կռիւն անհաւասար է, իհարկէ, բայց անհաւասար է նաև արիութեան զգացումը։ Եթէ առաջին պարագայում գերակշռող է հանդիսանում թիւրք կառավարութիւնը՝ իբրև կազմակերպուած մէկ ոյժ, երկրորդ պարագայում նրա զօրքերը երբէք չեն կարող մրցել մակեդոնացի ապըստամբական գնդերի հետ։ Ճիշդ է, յաճախ այս վերջինները կրում են պարտութիւն, բայց դա վերագրելի է միմիայն թիւրքական զօրքերի անհամեմատ բարձր քանակի ու զինուորական կարգապահ կազմակերպութեան, զէնքերի ու հրանիւթային ոյժերի առատութեան, բերդերի և այլ դիրքերի յարմարութեան, պատերազմելու սովորութեան, մի խօսքով մէկ ամբողջ տէրութեան պատերազմային ամէն աղբիւրների ու միջոցների անարգել գոյութեան։ Բայց և այնպէս թշնամու այդ ահագին և ահաւոր առաւելութիւններն արդելք չեն կարողանում լինել մակեդոնացի ապստամբական գնդերի բազմաթիւ աջողութիւններին։ Այդ աջողութիւնները երբեմն փայլուն են, երբ խիստ կարեւոր, որպէս և երբեմն առաջնակարգ վճռական նշանակութիւն են առնում շնորհով այլ և այլ պատերազմային դիրքերի գրաման թշնամու ձեռքից։ Եւ չը նայած ամենօրեայ ընդհարումներին, որոնք, ըստ երևոյթին, պէտք է հոգնեցնէին, ջլատէին ու խախտէին ապստամբների ոյժերը, դրա հակառակ իրողութիւնն է ներկայանում մեր առաջ։ Որովհետև ամեն — մի ժողովրդի ծոցում կայ մի զօրութիւն, որ այդպիսի հանգամանքներում յայտնւում է անսպառ։ Դա՝ նոյն ինքը ժողովուրդն է։ Եւ մենք տեսնում ենք, որ կամ ապստամբների նախաձեռնութեամբ և կամ նոյն իսկ ինքնաբերաբար՝ մակեդոնացի ժողովուրդը՝ գնալով՝ աւելի և աւելիմեծ բազմութեամբ անցնում է ապստամբների շարքը, մի հիանալի յափշտակութեամբ ընդդիմանալ իրա ազատագրութեան գործը։ Այդ փոքրիկ ժողովուրդը մի մեծ դաս է տալիս հայութեան։ Նրա այդ ընթացքը մի պատմական—հոգեբանական մեծ երևոյթ է։ Երբ մի ժողովրդի առաջաւոր ու վճռական մասը սկսում է թշնամու դէմ մղել մի կռիւ, որի դրօշի վրայ արձանագրուած է իր հարազատ ժողովրդի ազատութեան կրակէ բառերը. երբ այդ կռիւը սկսում է ընդունել լայն ծաւալ, ակներև յարատևութիւն և ունենալ աջողութիւններ. երբ միևնոյն ժամանակ նոյն այդ ժողովուրդը յայտնւում է ընդունակ ըմբռնելու այդ պատմական երևոյթի անհրաժեշտութիւնը, յայտնւում է ընդունակ նաև բարոյական ոյժ ներշնչելու իր այն քաջարի զաւակներին, որոնք իբրև կարապետներ առաջինները լինելով՝ նետւել են պատմական պայքարի արիւնալի յորձանքում, — ա՛յդ ժամանակ, բայց միայն այդպիսի՛ պայմանների ներկայութեան, նոյն ժողովրդի մէջ առաջ է գալիս այնպիսի հոգեբանական տրամադրութիւն, որ մի ներքին, անդուսպ զօրութեամբ, զգացման մէկ անդիմադրելի տրամաբանութեամբ մղում է նրան դէպի մաքառական հոսանքը։ Այդ օրից իվեր ապըստամբական ոյժերը գնալով՝ այլ ևս աճելու են, նրանց ընթացքը ստանալու է բուռն ու վճռական բնաւորութիւն և պարտութիւնները նրանց այլևս չեն ընկճելու, որպէս և աջողութիւններն աւելի ևս գրգռելու են նրանց մէջ յաղթութեան ծարաւը։ Այդուհետև այն կռիւը, որ սկսած էր համեմատաբար նուազ ոյժերով, այլևս մղելու երկրի ամեն կողմ տարածուած զօրաւոր գնդերով և ապստամբական շարժումն առնելու է ընդհանուր ժողովրդային ծաւալ ու կերպարանք։ Եւ հէնց այդ պատմական երևոյթն է, որ այսօր Մակեդոնիայում ներկայանում է մեր աչքին։

Սոսկալի են այն սարսափները, որ կատարում են այդ երկրում ժողովրդի խաղաղ մասի վրայ թիւրքական արիւնարբու վինուորները և այլ բաշիբոզուկներ՝ սուլթանական կառավարութեան հրահանգով։ Այդ մասը բազմաթիւ գիւղերում բաղկացած է այժմ գրեթէ բացառապէս ծերերից, կանանցից ու երեխաներից. տղամարդ դասն ապստամբութեան դրօշի տակ է։ Աննկարագրելի են այն հսկայական հրը-գեհենները, որ լափում են ամբողջ գիւղեր ու գաւառներ, այն գազանութիւնները, որ գործադրւում են թիւրքերի կողմից մակեդոնացիների վրայ, այն կոտորածները, որոնք տասնեակ ու տասնեակ հազարներով են համարւում, կանանց բռնաբարումները, շէնների կողոպտումները և աւերումները — մէկ ամբողջ մարդկային ցեղի ջնջելու դիւային ձիգերը և մէկ ամբողջ երկիր աւերակ դարձնելու աթէոյ իրքները։ Ա՜հ, Մեծ Մարդասպանի սովորական դժոխային բարբարոսութիւններն են դրանք՝ քաջմտանօթ ամբողջ մարդկութեան։ Դա նորատեսակ մի սարսափելի հանճարակ է, որ ժամանակ առ ժամանակ, դուրս գալով իր քրոնիկական աւելի նուազ ծաւալից, յանկարծ գլորւում ու շանթահարում է ամբողջ ժողովրդներ, իր ետևը սփռելով աւերակ ու մահ, մահ և մա՛հ....։

Իսկ եւրոպական քաղաքակիրթ մեծ պետութիւնն՝ը....։

Իրանց ազգերի ընդհանուր զայրոյթի հանդէպ՝ այդ տէրութիւնները լուռ են... դիւանագիտաբար։ Անտարակոյս, նրանք միջոցներ են փնտռում, թէ ինչպէս իրանց հէնց նոյն ու միևնոյն շահերի պատճառով այս անգա՛մ էլ փրկեն իրանց սիրելի Մեծ Մարդասպանին և, այս անգա՛մ էլ, ինչպէս վեց—եօթ տարի առաջ հայերի հետ, մի գաղտագողի հարուած գլորեն ետեւից մակեդոնացի արի ժողովրդի գլխին....։

ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

—o—

«Հնչակի» վերջին No—ի «Նոր գործունէութիւն» վերնագրով առաջնորդողը բաւականին տաք վիճաբանութիւնների նիւթ է դառել ամբողջ Կովկասում, հաւանական է, և շատ ուրիշ տեղեր։ Առարկութիւններից ամենագլխաւորը հետեւեալն է. այն է թէ՝ Հայերը Կովկասում յեղափոխական գործունէութիւն սկսելով, իրենց ոյժերը երկու մասի կը բաժանեն և այսպիսով, մի առանձին մեծ յեղափոխական ոյժ չը գոյացնելով Կովկասում, միևնոյն ժամանակ սատիկկը թուլացնեն թիւրքիայի դէմ գործող յեղափոխական ոյժը։ Ըստ երևոյթին, սա մի այնպիսի զօրաւոր առարկութիւն է; որի դէմ կարծէք, պէտք է լռել ու համաձայնել։ Սակայն, երբ խնդրին նայում էք մօտիկից և այն էլ ոչ թէ իբրև իդիօլոգներ, որոնք կարծում են, թէ առարկական կեանքում ամեն բան կախուած է մարդոց ցանկութիւնից ու բարի կամքից և որ նրանք կարող են մինչև իսկ Յեսու Նաւեայի նման, արեգակին արգիլել իր շրջանը շարունակելու, — այն ժամանակ այդ առարկութիւնը բոլորովին աւելորդ ու անտեղի է դառնում և յիրաւի, իբրև պատասխան այդ առարկութեան նախ հետեւեա

հարցը դնենք, — կարո՞ղ են արդեօք Կովկասի Հայերը չէղօք հանդիսանալ մնալ, երբ ամբողջ Ռուսաստանում և Կովկասում մի վիթխարի յեղ. շարժում է ընկրսուել այն անանալի միապետական ըէժիմի դէմ, որը Թիւրքիայից պակաս չէ ճնշում ու խեղդում մեզ — Հայերիս — թէ իբրև ընդհանուր երկրի քաղաքացիների և թէ առանձնապէս իբրև Հայերի։

Եթէ Հայերը կամ Հնչակեանները ուզենային նախաձեռնողներ հանդիսանալ այդ շարժման, գուցէ և փոքր ինչ թեթեւամտութիւն համարուէր, բայց երբ շարժումը արդէն սկսուած է հէնց իրենց Ռուսների կողմից, երբ այդ շարժմանը մասնակցում են այնպիսի յետամնաց ազգութիւններ, ինչպիսիք են Թուրքմենները և Լէզգիները, ինչի՞ նման կը լիներ չէղօք մնալը։ Չէի՞ն ցանկանայ արդեօք այդ մեր դէմ առարկողները, որ Հայերը օգնութեան հասնէին Ցարի կառավարութեանը ու նրան նպաստէին այդ յեղ. շարժումները խեղդելու, ճիշտ այնպէս, ինչպէս որ Յոյները օգնում են Թիւրքիային Մակեդոնիայի շարժումները խեղդելու։

Ենթադրենք մի րոպէ, որ բոլոր Հայ ականաւոր յեղափոխականները մի ընդհանուր ժողով են գումարել և միաձայնութեամբ որոշել են թէ՝ Կովկասի Հայերը չը պէտք է մասնակցեն Ռուսաստանի յեղափոխական շարժումներին։ Արդեօք նրանք հեռեղներ կունենայի՞ն Կովկասի Հայ ժողովրդից։ Մենք հաւատացած ենք, որ ոչ թէ միայնակ կը մնային, այլ և ընդհանուր ատելութեան առարկայ կը դառնային, որովհետև, ինչպէս որ Թիւրքիայի ամէն մի հայ՝ Սուլթանին ու իր կառավարութեանը Հայի թշնամի է ճանաչում, այնպէս էլ Կովկասցի Հայը Ցարի կառավարութեանն է թշնամի ճանաչում։ Եւ երբ այդ թշնամուն խորտակելու ամենայարմար առիթ է վերջապէս ներկայացել, ի՞նչպէս կարելի է Ռուսահային ասել, — «Դու ձեռք մի բարձրացրու քո անմիջական թշնամու դէմ, այլ թող գնա՛ քո եղբայրակիցներին օգնելու Թիւրքիայում»։

Ցառնըշինգ տարուց աւելի է, ինչ Թիւրքիայի եղբայրակիցներին օգնութեան գնալու կոչ է անում Կովկասի Հայերին, բայց արդեօ՞ք քա՞նի հատ պատերազմող ոյժեր տուեց Կովկասը Հայկական յեղափոխութեանը Ցաճկատանում. մինչդեռ հէնց որ Ռուս միապետութեան դէմ շարժուելու նշանը տրուեց, նոյն Կովկասում տասնեակ հազար հայեր ոտքի կանգնեցին։ Եւ դա շատ բնական է, որովհետև «ետարէն տիրոջը ցաւ կը տայ» ասում է ժողովրդական առածը։ Կովկասցի հայը, որչափ էլ սիրի իր Հայաստանցի եղբայրներին, որչափ էլ լսի ու ականատես լինի նրա տառապանքներին, դարձեալ նա չէ կարող զգալ այն վերքը, որ իր մարմնի վրայ չէ։ Հայաստանցուն օգնելը Կովկասցու մէջ յառաջ է գալիս եղբայրասիրութեան կամ բարեգործական ըզգացումից. իսկ այդպիսի զգացումից յառաջացած օգնութիւնը շատ հազուագիւտ դէպքերում միայն կարող է ինքնազոհութեան աստիճանի հասնել։ Այն ինչ բոլորովին այլ բան է, երբ մարդ իր սեպհական շահերը, իր կեանքն է վտանգի մէջ տեսնում, այդ ժամանակ արդէն նա այլևս ոչ մի արգելքի առաջ կանգ չէ առնում։

(Շարունակելի)

Թիֆլիս

Թորոս

ԳԵՐՄԱՆ ՍՕՑ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՏՐԷՋՏԷՆԻ ՄԷՋ

—o—

Ամսոյս 11-ին (Ն. Տ.) Տրէզտէնի մէջ բացուած է Դերմանական Սօց. Կուսակցութեան տարեկան համաժողովը, ուր ներկայ պիտի գտնուի նաև մեր աշխատակիցներէն Պր. Ս. Կասեան, իբրև ներկայացուցիչ Հնչ. Կուսակցութեան և «Վերածնութիւն»-ի։

Այս առթիւ Հնչ. Կուս.-եան Դ. Պատգ. ժողովը հետեւեալ հեռագիրը ուղղած է յիշեալ համաժողովին. —

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԴՐԷԶԴԷՆ

Ուղարկում ենք մեր սրտագին շնորհաւորութիւններ Սօց. Դեմոկրատիայի կոնգրէսի առիթով։

Մեր ներկայացուցիչն է Ս. Կասեանը։

Պատգամաւորական ժողով
Հնչ. Հայ Սօց.-Յեղափ. Կ.-եան

«ԲԱՂՄԱՎԷՊ»Ը ԻՐԱՒԱՐԱՆԻ ԴԵՐՈՒՄ

... o ...

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

Բայց տեսնենք ինչ հիմունք է բերում Բաղմավէպը մեզ հակառակելով։ «Ուսանողները, դատում է նա, նախ իրենց էական պարտքն ունին — հասարակութեան օգտակար ըլլալ իրենց մասնագիտութեամբ...։ Ուսանողները պէտք չեն մտնել այն իր (այսինքն մեր) ցոյց տուած հորիզոնէն ներս, ինչպէս հոն...»։ Մի զարմանալի թիւր կարծիք է, որ տիրում է շատ ու շատ հայերի գլխում, թէ յեղափոխութիւնը նշանակում է միմիայն զէնք և ռումբ, յեղափոխական ասպարէզը միևնոյն է թէ պատերազմի արիւնոտ դաշտը. ասել մէկին՝ թէ պէտք է հայկական քաղաքականութեամբ զբաղուել, թէ ճնշածների ազատութեան գործում անհրաժեշտ է յեղափ. սկզբունքներով առաջնորդուել՝ նշանակում է ըստ այդ տեսակ մարդկանց — խորհուրդ տալ նրանց թուր ու հրացան վերցնել և «հորիզոնէն ներս» մտնել։ Մենք չէինք կարծում, որ մեր «գիտնականա» հայրերն էլ այդպիսի գռեհիկ հասկացողութիւն կունենան յեղափոխութեան մասին։ Հէնց այդ է «Բաղմավէպիս» պ. Խմբագրի եղրակացութեան պատճառը, որ իբր թէ մենք քարոզում ենք ընդհանուր զինաշարժութիւն, որ մենք «ռազմական փող» ենք փչում ուսանողութեան ականջին։ Յեղափոխութեան գաղափարից սոսկացող մեծամտներին հետեւելով և դրանց շահը պաշտպանելով «Բաղմավէպնա» էլ ուսանողների «էական պարտքնա է համարում «հասարակութեան օգտակար ըլլալ իրենց մասնագիտութեամբ»։ Զկայ մի աւելի անիմաստ, թող փչող սոփեսութիւն, շաբլոնական դարձուածք, ինչպէս այդ նախադասութիւնն է նոր սերունդին սանձողների և «կրթողներիս» բերանում։ Իւրաքանչիւր գործող (handelnde) անհատ, ապրելով հասարակութեան մէջ, արդէն մի յայտնի օգուտ է բերում հասարակութեան, հէնց իւր շահից ստիպուած։ Բժիշկը ազատում է մէկին մահից ոչ թէ գաղափարական բարձր սկզբունքներից դրդուած, այլ ապրուստ հայթայթելու համար, նոյնպէս և կոշկակարը, հացթուխը, իրաւաբանը։ Ուրեմն էլ ինչո՞ւ պիտի փառաբանենք նրանց «էական պարտքը»։ Շատ շատերի ձեռքում այդ «էական պարտքը» շահագործման միջոց է նոյնիսկ։ Ո՞վ կարող է ժխտել Բպուի գործարանների ինժէներների կամ Այպցիգում առևտրական գիտութիւններ սովորած Պոլսեցի վաճառականի տուած օգուտը հասարակութեան։ Բայց տեսէք այդ մեծապատիւ ինտելիգէնտները, ինչ-

---

ԲԱՆԱՕԻՐԱԿԱՆ 12

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ՌՕԷՆՑՓ-Ի

թարգմանեց Քրանսերենէ

Ա. Տ-եան

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

—

Իշխանութեան ճակատագրական ազդեցութիւնը բնաւորութիւններու վրայ յաճախ երեւան կուգայ, նոյնիսկ առաջնորդ համարուողներու քով։ Շատ անգամներ տեսնուած չէ՞ որ ամենամաքուր բնաւորութիւնները ապականուին իշխանութեան ազդեցութեան տակ եւ քանի անգամներ մեծամտութիւնը, փառասիրութիւնը, անտարբերամտութիւնը, ինքնահաւանութիւնը անագին վնաս պատճառած ենթեր գեղեցիկ շարժման։ Ցիրաւի, վտանգը գոյութիւն ունի, որովհետեւ տիրապետելու կարիքը բնածին է մարդուն մէջ։

Այս տեսակէտով, անիշխանականներու խիստ քննադատութիւնը աւելի օգտակար է քան վնասակար։ Ուր որ իշխանութիւն կայ, հոն պէտք է քննթրել. ուր որ կառավարութիւն կայ, պէտք է հսկել որ զեղծումներուն առաջքը առնուի։ Անաքարխ կլոց մահամերձ վիճակի մէջ, հետեւեալ խորհուրդը տուած է, որ յարմար է ներկայ պարագաներուն. «Ցբրանսա՛, բուժուէ անհատներէն»։ Սակայն այս վերապահումը ընելով, ժողովուրդը պարտաւոր է եռանդով աջակցիլ պայքարներուն եւ ջանքերուն անոնց, որոնց ուսերուն վրայ կը ծանրանայ կառավարութեան բեռը։ Առաջնորդները. հեռու հետեւելէ ամբոխի սխալներուն եւ նախապաշարումներուն — նոյնիսկ եթէ ատով կորսնցնեն իրենց ազդեցութիւնը — պարտական են կռուիլ այն ամենքանի դէմ, որ իրենց համոզումով յոռի կամ վնասակար է։

Անոնք պէտք է կազմեն շարժման ամենաեռանդուն, բայց նաեւ ամենամաքուր մասը եւ երեւան բերեն մեր կուռին բարոյական կողմը, բարձրացնելու համար ամբոխին գաղափարները, փոխանակ կուրօրէն հետեւելու անոր։

Ցաճախ, առաջնորդները, փոխանակ անվեհեր յառաջ երթալու, ստիպուած են մղուելու. անոնք շատ անգամ բաւական բարձր չեն բռներ մարդկութեան դրօշակը, որ կը կանգնի նոյնիսկ բանւորներու շահերէն բարձր, քանի որ անոր նպատակն է ամբողջ մարդկութեան փրկութիւնը։ Գալով անոնց անձին, անոնք պէտք է ջանան վասակիլ ընկերակիցներու համակրանքը իրենց անկողմնակալութեամբ, եւ իբր օրինակ ծառայեն իրենց զոհողութեան ոգիով, անձնուիրութեամբ եւ քաջութեամբ։

Այդպիսի առաջնորդներ կարելի է գտնել. ատոնք արդէն գոյութիւն ունին։ Այս ընդհանուր նկատողութիւնները մէջ, ուր անձնականութեան խնդիրներ չեն մտնար, կարելի չէ անուններ տալ։ Բայց այն որ կը ճանչնայ զանազան երկիրներու փիսերները (գլխաւոր վարիչները) չկրնար չարտայայտել հոս իր խորին յարգանքը այնքան ազնիւ անձնաւորութիւններուն, որոնց կեանքը պատրանքներու եւ կսկծեցուցիչ վիշտերու շարք մըն է եւ ունայն նախանձելի չէ։ Իրենց ուժերուն լաւագոյնը ի զուր կը վատնուի, իրենց զրկանքները յաճախ անօգուտ կը թուին։ Ամբոխը այնքան անզգայ է, որ անոնց համար երջանկութեան օրերը այն ատեն են, երբ ժողովուրդը համակ ոգեւորուած է, երբ ան վայրկեան մը հպարտութեամբ կը կանգնի, տարիներով գլխիկոր մնալէ վերջը։ Անոնք յաղթելու են ամեն տեսակ արգելքներու եւ կրելու՝ ամեն կարգի անարգանք։ Անոնք կրնան սպասել ամեն տեսակ ապերախտութիւն։ Մտածում մը միայն զանոնք կանգուն կը պահէ կատաղի ալիքներու մէջ, այն է՝ պայքարը զոր կը մղեն իրենց իսէալին համար։ Հոն ուր այսպիսի մարդիկ կը ծնին, ո՛վ ժողովուրդ, որ այնքան յաճախ ապերախտ կը գտնուիս դէպի բարեկամները, տուր անոնց վստահութիւնդ, աջակցէ անոնց ջանքերուն, զօրացուր անոնց ոյժը։

Բայց եթէ ապացուցուի որ դուն քու համակրութիւնդ, ոյժդ եւ վստահութիւնդ տուած ես անարժանի մը, որ կը հետամտի ո՛չ թէ ընդհանուրի փրկութեան, այլ իր սեփական շահուն եւ փառքերուն, թո՛ղ քու ձեռքդ ոչնչացնէ այդ դաւաճանը։

(Շարունակելի)

պէս են շահագործում իրենց կատարելագործուած ոչական պարտքով՝ «անգէտ բանուորին և աւելի քան տգէտ գիւղացուն, իրենց ոտանձնաշնորհումների զէնքով» ինչպէս սպանում սրանց ազատութեան ձգտող սաղմնային գիտակցութիւնը։ Իսկ եթէ նրանք յեղափոխական գաղափարների դաւանող լինեն, ճնշուածների և շահագործուողների ոչ թէ միայն շահին, այլև ձգտումներին ծառայելու անհրաժեշտութեանը գիտակից լինեն և ուստի կաշխատեն հասարակութեան այժմեան կազմակերպութիւնը յաղթահարելու մեծ և անմահ գործի մէջ։ Ահա ինչո՛ւ համար ենք պնդում, որ ուսանողը, եթէ ուզում է ժողովրդի «փրկութեան» իրօք ծառայած լինել, պէտք է հետաքրքրի յեղափոխ. վէճով եւ գործով եւ մասնակցեն յեղափոխ. գաղափարներու։

(Շարունակելի)

Ս. Կասեան

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ Թ.

Մի նշանաւոր քաղաքական գործիչ էլ պակասեց գիւանագիտական աշխարհից։ Լորդ Սալիսբիւրին վախճանուեց մօտ ժամանակներս։ Որովհետև Արևելեան չարաբաստիկ խնդրում էլ որոշ և, նոյնիսկ, ականաւոր դեր է խաղացել այս պետական գործիչը, ուստի արժէ որ հակիրճ հայեացք նետենք նրա գործունէութեան և կեանքի նշանաւոր վայրկեանների վրայ։

Մօտ մի տարի առաջ արդէն հեռացել էր Լորդ Սալիսբիւրին քաղաքական ասպարէզից, ուր կէս դար շարունակ. 1853–ից մինչև 1902 թ. գործել էր իբրև համայնքների և Լորդերի ժողովների անդամ, իբրև պետական քարտուղար և, վերջապէս, իբրև մինիստր–նախագահ։ Այս երկար ժամանակ էր, որ ահագին քայլեր արեց բանուոր դասակարգը, սոցիալական քաղաքականութիւնը Գերմանական Պետութեան և Միացեալ Նահանգների մէջ։ Այս ժամանակաշրջանում էր, որ կայսերական գաղափարը հետզհետէ ծաւալ ստացաւ, Եւրոպական ազդեցութիւնը տարածուեց Ասիայի և Աֆրիկայի վրայ։ Իբրև մի պետութեան առաջնակարգ գործիչ՝ մեծ ընդունակութիւններով և ձիրքերով օժտուած էր, սակայն չի կարելի մեծ և չափազանց կարող գործիչների դասին վերագրել, ինչ որ կարող ենք մի Գլադստոնի, մի Բիսմարկի կամ Բիկոնսֆիլդի վերաբերմամբ ասել։ Մինչև ուղ ու ծուծը պահպանողական՝ նա հակառակ է եղել սոցիալ-դեմոկրատական մրքերի և սկզբունքների, ամեն կերպ աշխատել է բանուոր դասակարգի յառաջադիմութեան և բարգաւաճման առաջ խոչընդոտներ ու արգելքներ յարուցանել։ Իսկապէս այս է եղել ամեն մի ունեւոր անգլիացու մտաւանդ լորդերի ու մարքիզների փայփայած մտքերն ու տենչանքները։

1853 թ. հաղիւ 23 տարեկան երիտասարդ՝ Ստամֆորդ ընտրողական շրջանից իբրև պատգամաւոր ուղարկուեց համայնքների ժողովը։ Զարմանալի յամառութեամբ ու հետևողականութեամբ կռուեց դէմոկրատիայի դէմ, և առհասարակ, ամեն մի բարենորոգման դէմ, որոնք ժողովրդի ինքնուրոյնութեան զարկ կըտար։ Սալիսբիւրին պետական ասպարէզ մուտ, իբրև պետական քարտուղար, 1866 թ. երբոր Լոնդոնի բանուորները պահանջում էին իրենց ընտրողական իրաւունքներն ընդարձակել։ Երիտասարդ քարտուղարը գործ դրեց ամեն հնար և ազդեցութիւն բանուորական դասակարգի դէմ, սակայն երբոր կաբինետը ընդունեց բարենորոգման ծրագիրը, Սալիսբիւրին հրաժարուեց իւր պաշտօնից։ Սալիսբիւրին անուն հանեց՝ իսկապէս, արտաքին քաղաքականութեան մէջ, որը նախ 1878–80, ապա իբրև մինիստր նախագահ վարեց մինչև 1900 թուականը։ Ահա՛ այստեղ է, որ Սալիսբիւրին ցոյց չտուեց ստեղծագործական զօրեղ ոյժ և կարողութիւն։ Ամենագլխաւոր և այրուղ խնդիրը, որը 19–րդ դարում ամեն մի կրթուած անգլիացու կարող էր հետաքրքրել, Արևելեան հարցն էր, Ռուսաստանի յառաջխաղացութիւնը դէպի Կ. Պոլիս։ Այն ժամանակայ (80–ական թուականի) անգլիական արտաքին քաղաքականութիւնը կանում էր հետևեալում. «Անգլիան չպիտի թոյլ տայ, որ Զիբրալտարի, Բոսֆորի նեղուցները, Սուէզի պարանոցը և այլն, որևէ մեծ պետութեան ձեռքն անցնին»։

Սալիսբիւրին սաստիկ դէմ էր Կրիմի պատերազմին, այսինքն ցանկում էր, որ Ցաճկաստանը հպատակի Ռուսաստանին, որովհետև յայտնի ցոյց տուեց իւր հակումը դէպի հիւսիսային ինքնակալը։ Եւ երբ 1876 թ. վերջը Բալքանեան թերակղզու խռովութիւնները անհրաժեշտ համարեցին Կ. Պոլսում կոնֆերենց կազմել, Սալիսբիւրին իբրև արտակարգ պատուիրակ այնտեղ եկաւ, սակայն Ռուսաց ներկայացուցիչ Իգնատիէֆից այնպէս չարաչար խաբուեց, որ Սուլթանը բոլոր պահանջները մերժեց։ Նոյն Սալիսբիւրին 18 ամիս յետոյ գնաց Բեռլին Ռուս–Ցաճկական պատերազմից յետոյ կազմուած Վեհաժողովին, ուր Լորդ Բիկոնսֆիլդի աղդեցութեան տակ՝ դործեց Ռուսաստանի դէմ՝ յօգուտ Ցաճկաստանի։ Այս տեղ էր, որ Անգլիական դիւանագիտութեանը շընորհիւ՝ ոչնչացաւ Սան Ստեֆանոյի Դաշնագրի 16–րդ յօդուածը. և դրա տեղ յառաջ եկաւ 61–րդ չարաբաստիկ յօդուածը, որ «հառաջ եկաւ մեր գլխին և ցաւոց մեռեալ տառ մնաց»։

Դեռ կան հա՛ներ, որոնք սըխալմամբ ներսէս Պատրիարքի մեղամտութեան են վերագրում նոյն յօդուածի ծագումը, որի մէջ, մի ժամանակ. Մինաս Չերազն էլ քիչ մնաց հերոսի դափնիներ վաստակէր.... ագէտներից, գոչելով բարձրաձայն.... «И моі пахали»։ Լաւ կը լինէր, եթէ մի կողմից Հայաստանը, միւս կողմից Մակեդոնիան՝ որոշ ինքնուրոյնութիւն ստանալով՝ իբրև պատուար ծառայէ ինքէ Ցաճկաստանի և թէ. Ռուս Բռնակալութեան դէմ։ Թշնամու դարաւորի տակ հեծեծող ժողովուրդներ, անշուշտ կը գնահատէին իրենց «բարերարներիս» մեծագործութիւնները, սակայն Սալիսբիւրիի ռուսական քաղաքականութիւնը զուրկ է սկզբունքից, այլապէս անկարելի է 76 և 77 թուականների յանկարծական յեղնշրջումը բացատրել։ Լորդ Բիկոնսֆիլդի մահուանից յետոյ պահպանողականների ղեկավարութիւնն իր ձեռքն առաւ Սալիսբիւրին։ Մի ժամանակ վերստին ռուսասէր դարձաւ. և որովհետև միւս կողմից Գլադստոնն էլ հաւատում էր Ռուսաստանի՝ քրիստոնեաներին ազատելու գաղափարին, ուստի և Հիւսիսային բռնակալութեան առաջ ազատ դռները բացուեցան Միջին և Արևելեան Ասիայում, ուր վերջին տարիները ահագին նուաճումներ արեց։ Ուլթսունական թուականից յետոյ անգլիական քաղաքականութիւնը բարդացաւ։ Ֆրանսիացիք և Գերմանացիք սկսան դաղթա՛ին քաղաքականութիւնն առաջ տանել. այնպէս որ այս երկու պետութիւններն սկսան ընդհարիլ անգլիականին հետ։ 85 թուականին երբ Սալիսբիւրին հրաժարուեց իւր պաշտօնից։ Սալիսբիւրին անուն հանեց՝ իսկապէս, արտաքին քաղաքականութեան մէջ, որը նախ 1878–80, ապա իբրև մինիստր նախագահ վարեց մինչև 1900 թուականը։ Ահա՛ այստեղ է, որ Սալիսբիւրին ցոյց չտուեց ստեղծագործական զօրեղ ոյժ և կարողութիւն։ Ամենագլխաւոր և այրուղ խնդիրը, որը 19–րդ դարում ամեն մի կրթուած անգլիացու կարող էր հետաքրքրել, Արևելեան հարցն էր, Ռուսաստանի յառաջխաղացութիւնը դէպի Կ. Պոլիս։ Այն ժամանակայ (80–ական թուականի) անգլիական արտաքին քաղաքականութիւնը կանում էր հետևեալում. «Անգլիան չպիտի թոյլ տայ, որ Զիբրալտարի, Բոսֆորի նեղուցները, Սուէզի պարանոցը և այլն, որևէ մեծ պետութեան ձեռքն անցնին»։

Սալիսբիւրին սաստիկ դէմ էր Կրիմի պատերազմին, այսինքն ցանկում էր, որ Ցաճկաստանը հպատակի Ռուսաստանին, որովհետև յայտնի ցոյց տուեց իւր հակումը դէպի հիւսիսային ինքնակալը։ Եւ երբ 1876 թ. վերջը Բալքանեան թերակղզու խռովութիւնները անհրաժեշտ համարեցին Կ. Պոլսում կոնֆերենց կազմել, Սալիսբիւրին իբրև արտակարգ պատուիրակ այնտեղ եկաւ, սակայն Ռուսաց ներկայացուցիչ Իգնատիէֆից այնպէս չարաչար խաբուեց, որ Սուլթանը բոլոր պահանջները մերժեց։ Նոյն Սալիսբիւրին 18 ամիս յետոյ գնաց Բեռլին Ռուս–Ցաճկական պատերազմից յետոյ կազմուած Վեհաժողովին, ուր Լորդ Բիկոնսֆիլդի աղդեցութեան տակ՝ դործեց Ռուսաստանի դէմ՝ յօգուտ Ցաճկաստանի։ Այս տեղ էր, որ Անգլիական դիւանագիտութեանը շընորհիւ՝ ոչնչացաւ Սան Ստեֆանոյի Դաշնագրի 16–րդ յօդուածը. և դրա տեղ յառաջ եկաւ 61–րդ չարաբաստիկ յօդուածը, որ «հառաջ եկաւ մեր գլխին և ցաւոց մեռեալ տառ մնաց»։

Դեռ կան հա՛ներ, որոնք սըխալմամբ ներսէս Պատրիարքի մեղամտութեան են վերագրում նոյն յօդուածի ծագումը, որի մէջ, մի ժամանակ. Մինաս Չերազն էլ քիչ մնաց հերոսի դափնիներ վաստակէր.... ագէտներից, գոչելով բարձրաձայն.... «И моі пахали»։ Լաւ կը լինէր, եթէ մի կողմից Հայաստանը, միւս կողմից Մակեդոնիան՝ որոշ ինքնուրոյնութիւն ստանալով՝ իբրև պատուար ծառայէ ինքէ Ցաճկաստանի և թէ. Ռուս Բռնակալութեան դէմ։ Թշնամու դարաւորի տակ հեծեծող ժողովուրդներ, անշուշտ կը գնահատէին իրենց «բարերարներիս» մեծագործութիւնները, սակայն Սալիսբիւրիի ռուսական քաղաքականութիւնը զուրկ է սկզբունքից, այլապէս անկարելի է 76 և 77 թուականների յանկարծական յեղնշրջումը բացատրել։ Լորդ Բիկոնսֆիլդի մահուանից յետոյ պահպանողականների ղեկավարութիւնն իր ձեռքն առաւ Սալիսբիւրին։ Մի ժամանակ վերստին ռուսասէր դարձաւ. և որովհետև միւս կողմից Գլադստոնն էլ հաւատում էր Ռուսաստանի՝ քրիստոնեաներին ազատելու գաղափարին, ուստի և Հիւսիսային բռնակալութեան առաջ ազատ դռները բացուեցան Միջին և Արևելեան Ասիայում, ուր վերջին տարիները ահագին նուաճումներ արեց։ Ուլթսունական թուականից յետոյ անգլիական քաղաքականութիւնը բարդացաւ։ Ֆրանսիացիք և Գերմանացիք սկսան դաղթա՛ին քաղաքականութիւնն առաջ տանել. այնպէս որ այս երկու պետութիւններն սկսան ընդհարիլ անգլիականին հետ։ 85 թուականին երբ Սա-

---

6

ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻԻՆ ՄԷՋ

—o—

Բայց Եւրոպա մեծ սոսկումով կը դիտէ թէ ինչպէս այս կազմալուծուող դիակը, այս «ապառաժը» ամեն օր կը մաշուի եւ կը կախուի Վոսֆորին վրայ, մինչև որ օր մը կորսուի եւ ա-ներեւութանայ անոր անդունդին մէջ։

Ատոր համար է որ, այսպիսի պարագայի մէջ, Եւրոպա կը հետեւի կիզոյի յեսագայ խորհուրդին. «եթէ իրերու զօրութիւնը, դէմքերու բնական զարգացումը, յառաջ բերէ անջատում մը, նահանգ մը բաժնուի, այն ատեն պէտք է աշխատիլ որ ան դառնայ անկախ կառավարութիւն մը, մտնելու համար կառավարութեանց համախմբումին մէջ եւ ծառայէ օր մը իր նոր դրութեամբ, Եւրոպական նոր հաւասարակշռութեան»։ *)

*) Տես «Ռուսիա Արեւելքի մէջ», էջ 79։

Ուրեմն, Եւրոպական ուանդական քաղաքականութիւնը պալքանեան թերակղզիի մէջ կրնայ ամիսներ հետեւեալ կէտերու մէջ. ա) Պալքանեան թերակղզիի հաւասարակշռութիւնը ու Statu quo-ն ամեն գնով պահպանել թոյլ չտալով որ Պալքանեան իշխանութիւններէն եւ ոչ մէկը կարենայ զօրանալ ի վնաս միւսին. բ) Ներկային ուապագային մէջ յառաջ գալիք պալքանեան իշխանութիւնները զօրաւոր եւ անհաշտ թշնամիներ ընել Ռուսիոյ եւ գ) ամեն կերպով ու միջոցներով պահել թուրքիոյ ամբողջութիւնը, եւ աշխատիլ որ կարելի եղածին չափ ան ալ Ռուսիոյ զօրաւոր թշնամի մը ըլլայ, որուն համար պէտք է, վերակազմուիլ ներքնապէս զօրանայ։

Եւ այսպէս, 1886-էն իվեր կը տեսնանք որ պատմութեան մէկ հեգնութեամբը, ամենէն անհաշտ թշնամիները այսօր կը հանդիսանան ամենէն ջերմ պաշտպանները Պալքանեան թերակղզիին Statu quo-ի եւ թուրքիոյ ամբողջութեան։ Խորապէս տգոդուած այս հորին փրկարարութեան դիտակցութեամբ, ուր կարտացոլանան եւ կընդհարին, ինչպէս գեղադիտակի մը մէջ, հաղարաւոր շահերը Ռուսիոյ եւ Եւրոպայի, այս վերջինները պայն կը պաշտպանեն ամենամոլեռանդօրէն ամէն տեսակ միջոցներով, մինչեւ իսկ միլիոնաւոր ստրուկ աղդերու արիւնովը եւ ոսկրներովը։

Բայց Պալքանեան թերակղզիին Statu quo-ն եւ խաղաղութիւնը Ռուսիոյ համար առժամանակեայ միջոց մը, անհրաժեշտ խարսխ մընէ, որուն ետեւը թաքնուած եւ հեռու Եւրոպայի նենգամիտ նայուածքներէն, ան պիտի կրնայ շարունակել դանդաղօրէն բայց անվտանգ, իր ստորերկրեայ ուղին դէպի Վոսֆոր։ Իր այս նոր ծրագիրը իրականացնելու համար, Ռուսիա ի գործ դրաւ իր դիւանագիտական հանճարին բոլոր գաղանի զբաղանակները։ Եւ անոր համար ամենաառաջնակարգ եւ գլխաւոր խնդիրն էր, իր զօրաւոր թշնամիները պառակտել, անոնց մէջ փոխադարձ կռիւներ ըստեղծել եւ անոնցմէ մէկ քանին իր կողմը գրաւել։ Այս նպատակը իրագործելու համար ամենէն յարմարը Ֆրանսան էր, որ 1871-ին յաղթուած վրէժխնդրութեան ծարաւով կը տոչորուէր գերմանիոյ դէմ։ Խոստանալ Ֆրանսայի իր աջակցութիւնը այս վրէժխնդրութեան համար, օգնել անոր Չինաստանի մէջ եւ այլուր, — ահա ինչ որ գաւական էր զօրաւոր օգնական մը ձեռք ձգելու եւ Գերմանիոյ պէս սարսափելի հակառակորդի ձեռքերը կապտելու։ Ֆրանսօ-Ռուսական դաշնակցութիւնը փայլուն կերպով հասաւ այս նպատակին։ Կը մնար ուրիշ մշանջենական եւ ոչ նուազ սարսափելի Ռուսական հակառակորդ մը Պալքաններու մէջ — Աւստրօ-Հունգարիան։

թարգ. Շահպազ

Շարունակելի

լիզբիւրին առաջին անգամ մի-նիստր-նախագահութեան արժանացաւ, անգլիային Ֆնում էր ուրիշ չինչ, բայց եթէ կամ եւրոպական Դաշնակցութեան յարիւ, կամ Եւրոպական միացեալ ուժերի դէմ պայքարել։ Բիսմարկի տապալումից յետոյ, հետզհետէ բարեկամական յարաբերութիւններ ստեղծուեցան Անգլիայի և Գերմանիայի միջև։ Իտալիայի հետ կապ հաստատելուց յետոյ՝ բանակցութիւնների մէջ մտաւ Ֆրանսիայի հետ՝ իւր գիրքը Եգիպտոսում ամրապնդելու համար։ 19-րդ դարու ամբողջ քաղաքականութիւնը կայացաւ նրա մէջ, որ Աֆրիկայում նուաճումներ անէ՝ Ռուսաստանի Ասիայում կատարած նուաճումներին փոխարէն։ Ֆաշոդայի դէպքը արդէն յայտնի է ընթերցողներին՝ մեր նախկին նամակներով։ Տրանսվալի պատերազմը և Սալիսբիւրիի մեղա յութիւնը Զամբէրլէնի հետ պարզ է մանդամայն։

Սալիսբիւրիի յաջողութիւններից ամենաաչքի ընկնողն է՝ Միացեալ Նահանգների հետ բարեկամական և շահաւէտ յարաբերութիւններ ստեղծելը։ Սպանիա-Ամերիկեան պատերազմի ժամանակ Սալիսբիւրին բռնեց Ամերիկայի կողմը, ցոյց տալով Անգլիայի «խելօք» քաղաքականութիւնը, ուժեղի կողմն անցնելով, պզտոր ջրում ձուկ որսալու համար....։ Հայկական կոտորածների ժամանակ էլ, երբ հարկաւոր էր թշնամու սրի տակ դիտապատ դեռին գլորուղ ժողովրդին օգնութեան ձեռք կարկառել, Սալիսբիւրին անմահացրեց իրեն, մի «հռչակաւոր» սրբախօսութեամբ, թէ՝ «Անգլիական նաւատորմիղը չէ կարող Աբարատ լեռան գլուխը բարձրանալ», և սրախոշիոշ եղող ժողովրդի յուսահատ ձայնը և բողոքը մնացին ձայն բարբառոյ յանապատի...։ Որպէս քաղաքական ասպարէզից հեռանալով՝ նոյնպէս և իւր վախճանով չբարձրացրեց այն աղմուկը և դղրդիւնը, որպէս կարող էին և կարողացան անել՝ մի Գլատստոն, մի Բիսմարկ, կամ այլ ոք։ Սալիսբիւրին, թէև խելօք և նշանաւոր պետական Գործիչ հանդիսացաւ իւր հայրենիքի համար, բայց չէր և չկարողացաւ Գերազանց և մեծ Գործիչի անուն վաստակել, ու շատ մոռացութեան տրուեց, քաղաքական ասպարիզից հեռանալուց յետոյ։

Ս. Տաշիր

Լօնդօն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—o—

2/15 Սեպտ. 1903 Սոֆիա

... *խնբագիր*

Խնդրեմ, հաճեցէք Ձեր թերթի յառաջիկայ համարինմէջ անկիւն մը չնորհել այս գրութեան։

«Ճարժումա թերթի 564 համարի մէջ «Քեմախցի աղգային մը» ստորագրութիւնը ըստ յօդուածը վիս անուանարկելու բընոյթը կրելուն՝ պարտք կըզգամ հրապարակ գալ և պարզել հոգին այն խաւարի զաւակներուն, որոնք, դժբախտաբար, ամէն ըստորնութեան ընդունակ, աղգային պատիւ և արժանապատուութիւն ոտքի տակ տալով՝ դեռ կը յաւակնին իրը «աղգային» անհատներկայանալ հրապարակի վրայ։ Թէ որոնք են վիս մրոտելու համար իրենց ամենավերջին ճիգը թափող «աղգային» մակաբոյծները, — շատ լաւ գիտեմ, քանի որ հրապարակաւ «ձեր աւելի գըրամը յեղափոխութեանն տուէք գոչող ու անդին «Յեղափոխութեանն անունը շահագործող խըլէզները, ամէն ստոր ու նենդ միջոցներէ յետոյ, անձամբ ալ ներկայացան ինծի՝ իւղոտ պատառ մը խլելու յոյսով։ Այն ո՞ր «Քեմախցի աղգայինն» է, որ, յանուն քեմախցիներու *) փաստաբան կանգնելով՝ «մեր Քեմախցիներուս մէջ ընդհանրացած սովորութեան մը առաթիւ վիս բացատրութիւն տեսնել կուզէ. չէ՞ որ ողորմելին արդէն իր բերնով կը խոստովանի ա.դ «սովորութեան» գոյութիւն ունենալը. բայց ի՞նչ կըսեմ, հարկ չիկայ այդ չեշտուած առարկութեան պատճառաբանութիւն տալ, արդէն բացատրեցի թէ ինչ թաքուն նպատակով «Քեմախցի» ծածկանունին ետին պահուըտող այդ անբարեխիղճ յեղափոխական — տգրուկները կը շահագործեն աղգը՝ կուսակցական գրոշի մը տակ։ Օրինակը անձամբ տեսայ. ու եթէ այդ անուանարկումի. անազնիւ միջոցը միմիայն ինծի դէմ գործադրուէր, փոյթս անգամ չպիտի ընէի, բայց քանի որ վաղը միւս օր սովորութեան մը կարգը պիտի դասուի ան, հետևաբար կըզգուշացնեմ իմ հայրենակիցներս, որ այլևս չի խաբուին այդ շառլատաններէն. և հրաւէր կը կարդամ այդ «քեմախցի աղգայինա»ին, որ՝ երբ չունի ազնուութիւն — ինչ որ բացայայտ տեսնուեցաւ —, դէթ քաջութիւնը ունենայ — եթէ երբէք աղգին շահերը գերադաս կը համարէ իր վրէժխնդրական ոգիէն — հրապարակ գալ բուն անունով, որպէսզի ճանչնամ թէ ի՛նչպիսի «աղգայինի» մը դէմ կը գտնուիմ և կամ ո՛վ է հակառակորդս։

Մ. Մանուկեան

Ց. Գ. Մէկ օրինակ ալ «Ճարժումային ղրկուած է։

Նոյն

*) 20—25 քեմախցիներէն թերեւս մէյն 2-ը տեղեկութիւն ունեցած ըլլան։ Ծ. Ց.

ՔՐՕՆԻԿ

—o—

Կովկասէն մեր ստացած մասնաւոր տեղեկութիւններէն կերևի որ եկեղեցապատկան կարգադրութիւնը արդէն կատարուած իրողութիւն կարելի է համարել։ Այն ժողովրդական ցոյցերը, որ տեղի ունեցան Կովկասեան զանազան հայաբնակ կեդրոններու մէջ, բնաւ նկատողութեան առնուած չեն Ռուսական բռնապետութեան կողմէ և արդէն այլապէս չէր կրնար ըլլալ։ Ռուսական ծակ պիւտճէին համար արտակարգ աղբիւրներ պէտք էին և Ցարի խելացի խորհրդականները Ցարիզմի սնանկութիւնը յետաձգելու համար դէթ ժամանակ մը, հանճարեղ միտքը յղացած են գրաւելու և բռնի ուժով իրագործելու հպատակ ժողովուրդներու աղգային սեփականութիւններ։ Եւրոպական զանազան երկիրներ կողոպտելէ վերջ, մելիառներու հանող փոխառութիւններու ձևի տակ, Ցարիզմի համար ուրիշ ելք չկար, բայց եթէ իրերու բնական ընթացքով իր առջև բացուած այդ ուղիով ընթանալ։

Ռուսական անամօթութիւնը այն աստիճանի հասած է որ, ինչպէս կը տեղեկանանք, համարձակած է նոյն իսկ Կաթողիկոսին ուղղուած հեռագիրները ու նամակները իրենց հասցէին չյանձնել։

Վերջին դէպքերէն յետոյ, Կաթողիկոսի քաղաքական նշանակութիւնը, որ արդէն իր կրևորութիւնը կորսնցուցած էր Ռուսական ոտնձգութիւններու հետևանքով, բոլորովին ոչնչացած կարելի է համարել։

Ներկայ տխուր կացութեան հանդէպ մենք այն եզրակացութեան յանգած ենք, որ կովկասահայերու իրաւունքներուն և աղգային սեփականութիւններու բռնի գրաւումը, և այն բռնապետական ըէժիմը, որ կը տիրապետէ Կովկասի մէջ՝ ստեղծած է արդէն այն հասարակական պայմանները, որոնք անհրաժեշտ են թերթիս մէջ չատագովուած նոր գործունէութեան համար. և լիապէս ենք որ այդ նպատակով արդէն ձեռք առնուած միջոցները յաջողութեամբ պիտի պսակուին։

— Ռուսական կառավարութիւնը իր ճանկերը բացած՝ աջուձախ հայ յեղափոխականները ձերբակալել սկսած է, արդիլելու համար անոնց մուտքը Թըրքահայաստան։ Բայց ինչպէս կերևի մեզ հասած տեղեկութիւններէն, այս խստութիւնները իրենց նպատակին տրամագծօրէն հակառակ արդիւնք կուտան, ստեղծելով ժողովուրդին մէջ նպաստաւոր տրամադրութիւն մը դէպի ընդհանուր յեղափոխական գործը և աւելի ու աւելի ընդարձակելով յեղափոխական շարքերը։

* * *

Մակեդոնական յեղափոխական շարժումը—որ դժբախտաբար իր սկզբնաւորութեան ուժգնութիւնը կորսնցուցած է — կը շարունակէ միտքերը զբաղցնել Պուլկարիոյ մէջ, ուր այդ խնդիրը ոչ նուազ չափով կը ծառայէ նաև իբրև գործիք այսկամ այն պուլկարքաղաքական կուսակցութեան ձեռքը։

Արդի Պուլկար նախարարութիւնը, որ աղգային—ազատականներէ (սթամպուլովիստ) կազմուած է, տեսնելով որ ապարդիւն մնացին իր գործադրած միջոցները, որոնց դիմած էր մակեդոնական խնդիրը խաղաղ կերպով կարգադրելու համար, հասարակաց կարծիքի ճնշման տակ, հարկադրուեցաւ, դէթ ցոյցի համար, աւելի վճռական քայլ մը առնել։ Հոս փակագծի մէջ ըսենք որ Մակեդոնական խնդրի հանդէպ Սթամպուլովիստներու մինչև ցարդ բռնած ընթացքը, հետևանք է իրենց պաշտպանած այն հայեցակէտին, թէ Թուրք ու Պուլկար տէրութիւններու փոխադարձ շահերը կը պահանջեն որ ատոնց մէջ համերաշխ գործակցութիւնը եւ բարեկամութիւնը չդադրին գոյութիւն ունենալէ։

Ահա թէ ինչ էր Պուլկար կառավարութեան առած վճռական քայլը։ Տեսնելով որ Մակեդոնական ապստամբութիւնը տկարանալու վրայ է և Եւրոպական պետութիւններու ձեռնպահութենէն քաջալերուած՝ Թուրքը սկսած է հայկական չարդերու շարունակութիւնը Մակեդոնիոյ մէջ, խիստ ծանուցագիր մը ուղղած է Թուրքիոյ և Եւրոպական տէրութիւններուն, հրաւիրելով այս վերջինները որ սանձահարեն Սուլթանական մոլեգնութիւնը և առաջքը առնեն Պուլկար տարրին բնաջնջման։ Հակառակ պարագային կըսպառնայ հարկ եղած միջոցներու դիմել, իր վրայ ծանրացող պարտականութիւնը կատարելու համար։ Որպէսզի այս ծանուցագրերն ալ նախորդներուն պէս Եւրոպական արտաքին Դիւանատան ամենակուլ զամբիւղը զարդարելու չծառայեն, հարաւային Պուլկարիոյ երեք զօրաբաժիններու պահեստի զօրքերը զէնքի կանչուած են։ Տեսնենք թէ այս միջոցը ուէ արդիւնք պիտի ունենա՞յ։

Միւս կողմէ Պուլկար ընդդիմադիր կուսակցութեանց պատկանող թերթերը կը հաստատեն որ կառավարութեան ընթացքին այս յանկարծական փոփոխութիւնը՝ յառաջիկայ ընտրութիւններու մէջ յաջողելու համար սարքուած խաղ մըն է, ինչ որ հաւանականութենէ բնաւ զուրկ չէ։

Սրամ

Ստացանք Պարսկաստան հրատարակուող «ԳՈՐԾ» շաբաթաթերթի Ա. թիւը — «իբրեւ յայտարարութիւն»։

«ԳՈՐԾ»ը պիտի հրատարակուի 1904 Յունվար 1-էն սկսեալ, կանոնաւորապէս, շաբաթը մէկ անգամ։

Բաժանորդագինն է, արտասահմանի համար, տարեկան՝ 5 ռուբլի. վեցամսեայ՝ 3 ռուբլի։

Հասցէ՝ Tauris, Rédaction „GORTZ"

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печатница Е. Н. Малдашовъ — Русе